գիւղի փողոցներում թափառող սովտանջների պատկերը, ամենուրեք թափառում են քաղցածներ, իսկ օրական մեռնողների թիւը շատ շատ է։

Ա. ԴՕՎԼԱԹԱԲԱԴ

—

Նար—Զուղալից դէպի արևմուտք, 16 ֆարսախ հեռու, հարաւային սարերի փէշին, մի ընդարձակ դաշտի վրայ ընկած է Դօվլաթաբադը. սա ուռենիների և բարդիների տընկարաններով պճնազարդուած զուտ հայաբնակ մի գիւղ է, որի առաջ փռուած են արտերն ու արօտավայրերը։ Գիւղի արևմտեան կողմում գտնւում է մի քարիզ, որի ջուրն սկիզբ է առնում սարի խորշերից և պտոյտներ գործելով՝ նախ անցնում է Դօվլաթաբադ, յետոյ վազում է դաշտավայրերը ոռոգելու։

Գիւղը բաղկացած է 40 տնից 320 շնչով, որի 158-ը արական է և 162-ը իգական. նրանց տները շինուած են յարդախառն ցեխից, կողք-կողքի, իսկ փողոցները ծուռումուռ են և կեղտոտ։

Հողը պատկանում է Զէլլէ-Սուլթանին. գիւղացիները հողազուրկ են, նրանք մշակում են աղայի հողերը և բերքի $^2/_4$ մասը տալիս են նրան (սերմը աղան է տալիս)։ Բացի այդ՝ 160 թուման էլ պետական հարկ են վճարում։

Գիւղն ունի մի եկեղեցի Ս. Աստուածածին անունով. դպրոց չունի, եթէ ի նկատի չառնենք այն, որ երկու տարի առաջ եկեղեցու բակում սովորելիս են եղել 20-ից աւելի երկսեռ աշակերտներ։

Գիւղից հեռու, Շեր-սէֆիդ սարի լանջին փռուած են Դօվլաթաբադի այգիները։

Այս գիւղը 1916 թուին ենթարկուում է տնտեսական ծայրայեղ քայքայման Բէգզ-խան մեծ աւազակապետի կողմից։ Նա իր զինուած ձիաւոր խմբով երկու անգամ արշաւանք է գործում գիւղի վրայ և առնում է 1288 թուման